«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան,Դավթաշեն 2-րդ թղմ. 28/4
Հեռախոս՝ +374 10 37 37 00
Ֆաքս +374 10 36 00 04
Էլ.փոստ՝ info@armoil.am
sales@armoil.am
Վեբ-կայք՝ www.armoil.am

ARMOIL
MORE THAN THE BEST

"ARMOIL" CJSC
Address: 28/4, 2nd Block, Davtashen, Yerevan
Tel: +374 10 37 37 00
Fax: +374 10 36 00 04
E-mail: info@armoil.am
sales@armoil.am
Website: www.armoil.am

Կոտայքի մարզի
Եղվարդ համայնքի ղեկավար
պարոն Նորայր Սարգսյանին
Ամսաթիվ՝ 22.11.2024թ.
№ 01/22114

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի արդյունաբերական գոտում քսայուղերի և բիտումի գործարանի կառուցման նպատակով, համաձայն ՀՀ Կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման, անհրաժեշտ է իրականացնել հանրային լսումներ: Գործունեությունը նախատեսում է իրականացնել «ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ-ն՝ իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Պետրոսյան փող., 28/4 շենք (Դավթաշեն վարչ. շրջան):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվում է Եղվարդ քաղաքի արդյունաբերական գոտում կազմակերպել բիտումի օքսիդացման գործարան, որը կներառի նաև քսայուղերի պատրաստման և փաթեթավորման տեղամաս: Այդ նպատակով ընկերությունը սեփականաշնորհել է 2.8 հա մակերեսով տարածք և փոխել հողի նշանակությունը արդյունաբերականի: Նախկինում սա եղել է աղբավայրի վերածված ամայի տարածք:

Գործարանի տարեկան արտադրողականությունը նախատեսվում է 90 000 տոննա: Համաձայն նույն որոշմանը 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնեք.

1) հանրային լսման իրականացման վայրը, օրը և ժամը (հանրային քննարկման օրը պետք է նշանակեք Ձեր պատասխանի օրվանից հետո 21-25 աշխատանքային օրերի ընթացքում)

2) համայնքի ղեկավարի կողմից տվյալ հանրային լսման համար համայնքի ղեկավարի իրավասությունների սահմաններում նշանակված կամ լիազորված անձի տվյալները, ով պատասխանատու է լսման կազմակերպման և անցկացման համար (անունը, ազգանունը, պաշտոնը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը):

Հարգանքներով՝
«Արմօյլ» ՓԲԸ տնօրեն

Ալֆրեդ Աբեղի
(098-000-161)

«ԱՐՄՕՅԼ»
"АРМОЙЛ"
"ARMOIL"
01259305

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍՏԱՑ Թիվ 11-4405
«22» 11 20